

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2019թ. հոկտեմբերի 8-ի **Անդրանիկ** նիստի

ք. Երևան

սկիզբ՝ 08 հոկտեմբերի 2019թ., ժ. 11:05
ավարտ՝ ժ. 13:00

Մասնակցում էին՝ խորհրդի 11 անդամներից 9-ը:

Բացակայում էին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ներկայացուցիչը և «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախագահ Կ. Դանիելյանը, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) նախագահի տեղակալ Մ. Փաշայանի փոխարեն մասնակցում էր ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Աշոտ Մուրադյանը և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի (ՀՀ ԱԱՊ) նախագահ Մ. Սարգսյանի փոխարեն մասնակցում էր ՀՀ ԱԱՊ իրավաբանական վարչության պետ Գեորգի Մարտիրոսյանը:

Հրավիրված էին՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատի) նախագահի տեղակալ Գ. Անանյանը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՀՀ ՎՊԽ) անդամ Լ. Պետրոսյանը, Արմստատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը, Երևան քաղաքի վարչության պետ Ա. Վարդանյանը, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհուրդ) քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Նշանյանը, ում քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված է Հանրային խորհրդի քարտուղարի պարտավորությունները:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. Պաշտոնական վիճակագրության, այդ թվում՝ ՀՀ ազգային վիճակագրական համակարգի ընդհանուր նկարագրի ներակայացում
2. ՀՀ պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի նախագահի ընտրություն
3. ՀՀ պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի աշխատակարգի նախագծի քննարկում
4. «2020 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծի ներակայացում
5. Այլ հարցեր:

Բացման խոսքով հանդես եկավ և մինչև Հանրային խորհրդի նախագահի ընտրությունը, նիստը վարեց Արմստատի նախագահ **պարոն Ա. Մնացականյանը:**

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 9 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Համաձայն օրակարգի, Արմստատի նախագահը **ներկայացրեց** «Հայաստանի պաշտոնական վիճակագրության ակնարկ» շնորհանդեսի նյութը:

Օրակարգի 2-րդ հարցը վերաբերում էր Հանրային խորհրդի նախագահի ընտրությանը:

Ս. Մնացականյանն **առաջարկեց** Հանրային խորհրդի կազմից «Արմենպրես» հայկական լրատվական գործակալության գործադիր տնօրեն Ա. Անանյանի թեկնածությունը՝ ընդգծելով զանգվածային լրատվամիջոցների կողմից հանրությանը տեղեկատվության մատուցման նրա բարձր պրոֆեսիոնալիզմը:

Բաց քվեարկությամբ Ա. Անանյանը միաձայն **ընտրվեց** Հանրային խորհրդի նախագահ:

Ա. Անանյանը շնորհակալություն հայտնեց խորհրդի անդամներին վստահության համար և շարունակեց վարել նիստը:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի **քննարկության դրվեց** Հանրային խորհրդի աշխատակարգի (Աշխատակարգ) նախագիծը:

Այն հիմնավորմամբ, որ Աշխատակարգը նախապես տրամադրվել էր Հանրային խորհրդի անդամներին, Ս. Մնացականյանն առաջարկեց այն չընթերցել, այլ միայն ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ դրա վերաբերյալ:

Քննարկման արդյունքում ընդունվեցին Հանրային խորհրդի անդամների կողմից ներկայացված հետևյալ առաջարկությունները.

- 17-րդ կետում լրացնել դրույթ առ այն, որ Հանրային խորհրդի նիստի օրակարգը նիստի օրվանից առնվազն 5 օր առաջ կազմվելուց բացի նաև նույն ժամկետում ներկայացվի Հանրային խորհրդի անդամներին: Այդ իմաստով վերախմբագրել նաև 25-րդ կետի 1) ենթակետը:
- 23-րդ կետից հանել Հանրային խորհրդի քարտուղարի պաշտոնը և անուն ազգանունը:

Որոշվեց՝ հավանություն տալ առաջարկությունների հիման վրա լրամշակված Աշխատակարգին և այն ներկայացնել ՀՀ ՎՊԽ հաստատմանը:

Օրակարգի 4-րդ հարցը՝ «2020 թվականի վիճակագրական ծրագրի» (Ծրագիր) նախագծի ներկայացումն էր: Այն **ներկայացրեց** Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ով ներկայացրեց Ծրագրի կազմման սկզբունքները, բովանդակությունը և բովանդակության կառուցման գործիքակազմերը, ինչպես նաև տեղեկատվություն առ այն, թե սույն թվականի հունիսի 10-ից վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կարծիքին ներկայացված Ծրագրի նախագծի վերաբերյալ նրանց կողմից քանիսն են առաջարկություններ ներկայացրել Ծրագրի նախագծի վերաբերյալ:


08.10.2019թ.

Նշվեց, որ առաջիկայում վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների պահանջարկի ուսումնասիրման հիման վրա լրամշակված Ծրագրի նախագիծը կներկայացվի Հանրային խորհրդի կարծիքին և կքննարկվի Հանրային խորհրդի նիստի ընթացքում:

Նիստի եզրափակման խոսքով հանդես եկան Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը և Հանրային խորհրդի անդամ, Արմատատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը:

08.10.2019թ.

Հանրային խորհրդի
նախագահ՝



Ա. Անանյան

Հանրային խորհրդի
քարտուղար՝



Գ. Նշանյան